**1387. ԽԱՉՔԱՐԻ** *վրա, որն ագուցված է եղել կիսավեր եկեղեցու հարավային պատի մեջ, Նորքում.*

Կամաւն Այ. ես Միրզախան կանգնեցի սուրբ խաչս բարեխաւս Տէրունին քա-հանային, որ էր սա տէր տանս Գեղամայ։

*Հրատ. Սմբատյանց, 608; Լալայան, XIX, 22։*

**1388. ԽԱՉՔԱՐԻ** *վրա, որն ընկած է եղել հին գերեզմանատան մեջ.*

Ես Ամիրդաստ կանգնեցի տապանս հաւր իմոյ Գորգայ, մաւր իմոյ Մամախանի՝ ով կարդէք յաղաւթս յիշեցէք։

*Հրատ. Լալայան, XIX, 21։*

## ՓՈՔՐ ՄԱԶՐԱ

*Գյուղի հին անունը հայտնի չէ. տեղագրական գրականության մեջ հին հուշարձաններ չեն արձանագրված, բայց մեր հավաքածուում ահա գտած այս չորս արձանագրությունը գյուղի հնությունը հասցնում են մինչև XIII դարը, իսկ նրա չեն լինելը մինչև XVI—XVII դարերը (այժմ էլ չեն է)։ Այս հանգամանքը, որ պահպանված հուշարձանները ցրված են, առանձնակի և տաճարն էլ մի փոքր մատուռի է նման, թերևս նշան են հին գյուղի փոքր լինելուն։*

**1389. ԽԱՉՔԱՐ**, *մեծ, գեղաքանդակ, կանգնած է եղել մեծ ժայռաբեկորի վրա՝ Ամիր Ալավերդիի բակում, այժմ ընկած է և վերևի ձախ մասը կոտրա-ված, ճակատին և խորանի շուրջը 5 տող.*




Ի ՉԺԸ։ (1269) ԹՎ. ԿԱՆԿՆԵՑԱՒ ՍԲ. ՆՇԱՆՍ| Ի ԲԱՐԷԽԱՒՍՈՒԹՆ. ԹԱԳՈՐԿԱՆՍ, ԶԵՌ|ԱՄԲ ..... ՄԿՆՈՅ ԵՒ ՀԱՊ|ԻԷ... Ի ՅԻՇԵՑԷՔ| Ի ՔՍ։

Ծանոթ. *Թվականի տասնավորը կարելի է և Ծ վերծանել։*

**1390. ԽԱՉՔԱՐ**, *մեծ, գեղաքանդակ, կանգնած է պատվանդանի վրա, գյու-ղի արևմտյան եզրին, արտերի մեջ, ժայռաբեկորի վրա. ճակատին և թևերի շուրջը 5 տող.*




ՅԱՇԽԱՐՀԱԿԱԼՈՒԹՆ. ԱՊԱՂԱ [ՂԱ-ՆԻՆ] |ԵՍ ՍՈՒՍԲԷՍ ԿԱՆԿՆԵՑԻ ԶԽԱՉՍ ԲԱՐԷԽԱՒՍ|ՈՒԹՆ. ԾՆՈՂԱՑ ԻՄՈՑ ՅԻ-ՇԵՑ|ԷՔ Ի ՔՍ. ԱՂԱՉԵԼՄ :| [ԹՎ.] :ՉԾԷ: (1308)։

**1391. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, *մեծ, տափակ, անզարդ տաշված, ընկած է գյուղի կենտրոնում. երեսին 9 տող.*

ԵՍՄԻՐ
ԱՆՍԿԱԳԵ
ՑԻՏԱՊԱՆ
ՍՀԱՒՐ
ԻՄՈՅԽԱՐ
ԻՓՇԱՀԻ
ՈՎԿԱՐԴԷՔ
ՅԱՂԱՒԹՍ:ԻԹ
ՎԻՍՋԾԲ

ԵՍ ՄԻՐ[Ա]ՆՍ ԿԱ[Ն]Գ[Ն]Ե[Ց]Ի ՏԱՊԱՆ[Ս] ՀԱՒՐ[Ի]ՄՈՅ ԽԱՐ[Ի]ՓՇԱՀԻ. [Ո]Վ ԿԱՐԴԷՔ [Յ]ԱՂԱԻԹՍ [Յ]ԻՇԵՑԷՔ, Ի Թ[Ո]Վ[Ի]Ն ՋԾԲ: (1503):

**1392. ԳՅՈՒՂԱՄԻՋԻ** *մատուռի պատի հարավ-արևելյան անկյունաքարի վրա, արտաքուստ, հասարակ գրերով, մի խաչի կողքին, 4 տող.*

ՎԱ
ՐԴԽ
ԱՏՈՒՆԻ
ՄԱՍԷՍ

ՎԱՐԴԽԱՏՈՒՆԻ, ՄԱԽՍԵԱ[Ի]:

Ծանոթ. *Գրերը* XVI—XVII *դարերի ոճի են։*

## ԱԿՈՒՆՔ (ԱՆՑՅԱԼՈՒՄ՝ ՂԸՐԽԲՈՒԼԱՂ, ՀՆՈՒՄ՝ ԱԿԱՆՔ)

*Գյուղի հին անունը տեղագիր գրականության մեջ տարբեր ձևերով է հիշատակվել, որովհետև հաստատուն փաստեր չեն ունեցել ձեռքի տակ։ Այսպես, Սմբատյանցը գրում է* Վարդանաշեն[1], *Լալայանը հետևելով նրան՝* Վարդաշեն կամ Վարդանաշեն[2]. *Երկուսի էլ աղբյուրը Ստ. Օրբելյանի ցուցակն է, բայց անհայտ անորոշ է, թե Սոդքի որ գյուղն է այն ներկայումս. ապա, Օրբելյանի ցուցակում էլ կա* Վարդանարակք *անվանումը։ Ալիշանը նույնացնում է Ջամբռի հիշատակած* «Հոտած աղբյուր» *գյուղի հետ*[3]։

*Մեզ հաջողվեց գյուղի հին անունը հայտնաբերել մի խաչքարի արձանագրության մեջ, որը մինչ այժմ նկատված ու հրատարակված չի եղել։ Այդ խաչքարը գտնվում է գյուղի հարավ-արևմտյան եզրին բարձրացող «Կլոր գար» կոչվող բլրի վրա. ճակատին ռուցիկ տառերով ունի հետևյալ արձանագրությունը.* «Ես Միրզանան, Ակնեց առաջնորդ, կանկնեցի խաչս» *Ստ. Օրբելյանի Պատմության 1910 թ. հրատարակության մեջ Սոդքի ցուցակում կա Ականք գյուղ, 10 չափ հարկով, իսկ Ալիշանի օգտագործած տպագիր և ձեռագիր օրինակներում այդ գյուղը Ակոնք և Ականք ձևով է գրված եղել։ Նա գերադասում է Ականք ձևը, երևի նկատի ունենալով Օրբելյանի ցուցակներում հիշատակված Ակն, Ականք և Ականայ անվանումների գոյությունը՝ Հաբանդ, Աղահեճ և Բաղանիք գավառներում։ Բոլոր դեպքերում ներկա* Ակունք *գյուղի հին անունը* Ականք *կամ* Ակոնք *է եղել, որը և հիշատակված է մեր արձանագրության մեջ (№ 1451)։ Արձանագրությունը թեև թվական չունի, բայց ըստ խաչքարի քանդակների ոճի՝ վերաբերում է* XV—XVI *դարերին։*

*Գյուղի սահմաններում եղած արձանագրությունները հետևյալ վայրերում են, ըստ հնության.*

---

1 «Գեղարքունիք», էջ 617։
2 «Ազգ. հանդես», XIX, էջ 13։
3 «Սիսական», էջ 70։